

# «ԱՅՍՕՐ ՍՓԻՒՌՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ ՈՒՆԻ»

ԴՈԿՏ. ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՄԱՊՕ ԱՐԵԱՆ

Մանուանդ վերջին տարիներուն եւ մէկէ աւելի հարթակներու վրայ գրութիւններ երեւցան, որոնց ենթախորքը Սփիւռքի այսօրուան պատկերը ներկայացնելն էր: Բարդ խնդիր է Սփիւռքի մասին գրելը, արտայայտուիլը, անոր բազմաբովանդակ «մարմին»ը եւ բովանդակութիւնը ցոյց տալը:

Միս կողմէ, շատ հեշտ է անշուշտ Սփիւռքի մեծ պարունակը մէկ բառով, մէկ գաղափարով եւ մէկ տեսլականով ամփոփելը:

Գուցէ այդ փորձով է նաեւ, որ փորձ կը կատարուի ստեղծել միաբեւեռ, միատարր մարմին-գոյակցութիւն մը, որն իրականութեան մէջ գոյութիւն չունի, բայց ունի հաւաքական հանրային կարծիքին վրայ ազդեցութիւն բողմելու իսկական ներքիժ:

Այս բոլորէն անդին սակայն կան իրականութիւններ, որոնք յաճախ կ'անտեսուին, մէկընի կը դրուին, կը համարուին «կարմիր գիծ» ու այդ բոլորի կողքին ալ կը ներկայացուին, որպէս հայ իրականութենէն կտրուած անջատ-մարմիններ:



Հարցումը սակայն, որ մեզ կը հալածէ հետեւեալն է՝ իրօք, ի՞նչ է Սփիւռքը, ի՞նչ իրական հիմքեր ունի՞ր Սփիւռքի ամբողջական պատկերը նկարագրելու ու ամենակարեւորը անոր երթին, անոր գաղափարներուն ու նաեւ անոր ուղին ճիշդ մեկնաբանելու:

Կրնա՞նք մարտէլ ինքնանպատակ Սփիւռք մը, կրնա՞նք ընդունիլ, կամ գոյակցիլ այն Սփիւռքին հետ, որ յստակ նպատակ մը, եւ յստակ գաղափար մը չունի: Կամ աւելին կրնանք հաւատա՞լ, որ այսօրուան դարուն մէջ Սփիւռքի հատուած մը կայ, որուն հայկական ինքնութիւնը, որուն արմատներու հարցը, որուն ներուժը եւ գաղափարը պարզապէս «սիրողական» հիմքերու վրայ է:

Կը բանի, երբ կարիքը կայ երեւումի մը, կը բանի երբ կարիքը կայ դրամական մեծ հոսքի մը, սակայն իրականին մէջ հեռու է իր արմատներէն ու ամենակարեւորը տեսլական մը չունի:

Հոս է նաեւ, որ կը գծուին իրական եւ շեշտակի գիծեր, որոնք մեզ կրնան դնել սուր իրականութիւններու առջեւ: Ու այս պատճառով է նաեւ, որ հասկնալի, ընկալելի կը սկսի դառնալ, որ այսօր աւելի քան որեւէ ժամանակ Սփիւռքը կարիքն ունի ընդհանուր վերանայման, աւելին Սփիւռքի գաղափարն է, անոր բովանդակութիւնն է, ու մանաւանդ անոր ներուժն է, որ պէտք է դրուի տեսանելի նժարի մը վրայ ու այդ նժարին վրայ պէտք է գրուած ըլլայ Հայաստանի ու հայութեան շահերը:

Առանց այդ նժարին, պարզ է, որ Սփիւռքը պիտի դառնայ եսակեղծ ու ինքնաստիճեան ապրող եւ նոյնիսկ աննպատակ եւ անգաղափար գոյակցութիւն մը...:

Ամէն պարագայի Սփիւռքի խնդիրներուն մասին օրերս խօսեցայ հասարակարան, սփիւռքագետ, Օրֆորտոս համալսարանի դասախօս Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանին հետ:

Ստորեւ մեր գրոյցի սղագրութիւնը՝

**- Դոկտ. Զիլինկիրեան, շուրջ երկու ամիս առաջ, Լոս Անճըլըսի մէջ կայացաւ Սփիւռքի հարցերը ի մի բերող կարեւոր համաժողով մը: Այն կազմակերպուած էր Դոկտ. Վիգէն Յովսէփեանի գլխաւորած՝ Ամերիկայի համահայկական խորհուրդին կողմէ: Այդ ժողովին մասնակից էիք նաեւ դուք, որպէս՝ բանախօս: Խնդրեմ, հակիրճ ձեռով ի՞նչ կրնաք պատմել կարեւոր եւ նոր ձեռնարկով կայացած համաժողովին մասին:**

- Նախ ըսեմ, որ այդ հանդիպումը կազմակերպուած էր Քալիֆորնիոյ մէջ գոյութիւն ունեցող հայկական կազմակերպութիւններու խորհուրդին կողմէ, որ կը կոչուի «Համահայկական Խորհուրդ» եւ կը մէկտեղէ մօտաւորապէս 24-25 կազմակերպութիւններ, որոնք բոլորն ալ կը գործեն Քալիֆորնիոյ մէջ: Ուրեմն, այդ կազմակերպութիւնն էր, որ նախաձեռնած էր այս համաժողովը: Ըստ կազմակերպիչներուն, այս առաջին քայլն էր, ուր մէկտեղուեցան համայնքի վարչայինները՝ այդ կազմակերպութեան ղեկավարութիւնը եւ վարչականները, ինչպէս նաեւ խումբ մը մասնագետներ՝ գիտաշխատողներ, որոնք կը զբաղին Սփիւռքի հարցերով, ուսումնասիրած են Սփիւռքը եւ ունին այլ մասնագիտութիւններ: Հետեւաբար, համաժողովը այս երկու տարբեր աշխատանքներ տանող մարդոց համատեղումն էր, որպէսզի աւելի հանգամանօրէն քննարկուին սփիւռքեան կեանքի մէջ գոյութիւն ունեցող առկայ խնդիրները:

**- Վերջին շրջանին, մենք նկատեցինք, յատկապէս սփիւռքի մէջ, իրենց հոգեւոր ներկայութիւնը եւ ազդեցութիւնը ունեցող երկու աթոռներու՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւններու շեշտակի խօսքը, Սփիւռքի ներուժին մասին: Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսն ալ այս տարի հռչակած էր «Սփիւռքի տարի»: Այս առումով, այս աթոռները կը համագործակցի՞ն իրարու հետ, թէ իւրաքաչիւրը անջատ կը գործէ: Ինչպէ՞ս կը գնահատէք պատկերը:**

- Նախ պէտք է ըսենք, որ «Սփիւռք» եզրը օգտագործելով, շատ գործնական վերլուծութիւն չենք կրնար ընել, կամ առաջ չենք կրնար երթալ: Ինչպէս ասկէ առաջ ալ ըսած են, պէտք է աւելի հասցեական ըլլանք եւ աւելի մանրամասնենք, թէ ինչ նկատի ունինք, երբ «Սփիւռք» կ'ըսենք: Ըստ իս աւելի ճիշդ կ'ըլլայ խօսիմք համայնքներու մասին, որպէսզի կարենանք աւելի լաւ ձեռով հասկընալ, ըմբռնել եւ վերլուծել, թէ ո՞ր համայնքին եւ ի՞նչ կարողականութեամբ կ'ուզենք զօրաշարժի ենթարկել, եւ այլն: Բայց եթէ «Սփիւռք» եզրը ընդհանուր առումով անընդհատ գործածենք, կը կարծեն, թէ տեղ պիտի չհասնինք: Նախ պէտք է ըսենք, թէ ո՞ր համայնքին մասին կը խօսինք: Ինչպէս գիտենք, լիբանանահայ համայնքը տարբեր խնդիրներ ունի, առօրեայ մտահոգութիւններ ունի: Ամերիկահայ համայնքի խնդիրները այլ են, Եւրոպայինը՝ այլ: Ուրեմն երբ «Սփիւռք» եզրը կ'օգտագործենք, քիչ մը պէտք է զգոյշ ըլլանք եւ պէտք է աւելի մանրամասն խօսինք: Ինչ կը վերաբերի եկեղեցոյ պետերու կոչին, այստեղ դարձեալ կ'ուզեմ խնդրին աւելի լայն ձեռով անդրադառնալ, որն է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ մանաւանդ... Սփիւռքի ղեկավարութեան խնդիրը: Այսինքն, այսօր կարծէք ղեկավարութեան պակասը կայ: Ունինք ղեկավարներ, սակայն՝ ղեկավարութիւն, իբր այդ, կարծէք չունինք, որովհետեւ կարծիքները շատ են եւ պառակտումները՝ շատ: Անընդհատ կը լսենք միացման եւ միասնականօրէն աշխատելու կոչեր, բայց որքանով այդ կոչերը իրականութեան կը վերածուին, ինձի համար դեռ յստակ չէ:

**- Դոկտ. Զիլինկիրեան անցեալ տարի, Պոլսոյ աթոռն էր ուշադրութեան կեդրոնը, այսօր Երուսաղէմի աթոռը կիզակէտի վրայ է: Համայն հայութեան համար շատ յստակ չէ պատկերը, թէ ինչ կը կատարուի այնտեղ: Ի՞նչ է այդ տագնապին հիմնախդիրը:**

- Երուսաղէմի մէջ նման խնդիրներ միշտ եղած են, գոնէ եթէ մեր ժամանակահատուածը առնենք՝ յիսունական-վաթսունական թուականներէն մինչեւ մեր օրերը: Իբրեւ այդպիսին եղածները նորութիւն չեն, բայց անշուշտ լուրջ խնդիր է հողերու իրավիճակը, թէ անոնց ապագան ինչ պիտի ըլլայ, եւ այլն: Այստեղ կ'ուզեմ երկու կէտ մատնանշել, որ ընդհանուր եկեղեցոյ կը վերաբերի: Առաջինը՝ մեր եկեղեցոյ ղեկավարութիւնը, իր հանրային յայտարարութիւններուն եւ քարոզներուն մէջ կ'ըսէ, թէ եկեղեցին ժողովուրդին կողքին է,



կամ ժողովուրդին թիկունք կանգնած է, կամ ժողովուրդին կ'աջակցի, եւ այլն: Բայց խորքին մէջ, եկեղեցին ժողովուրդն է, ինչպէս կարգ մը հոգեւոր առաջնորդներ եւս կը նշեն: Այսինքն, պէտք չէ ժողովուրդը զանազանէ եկեղեցիէն: Այնպէս չէ որ եկեղեցին կառոյց է, ունի իր նուիրապետական ղեկավարութիւնը՝ հոգեւորականները, եւ անկէ զատ եւ առանձին կայ ժողովուրդը: «Էքլէսիա»-ն շատ կարեւոր եզր մըն է կամ հասկացողութիւն մըն է: Երբ եկեղեցի ըսենք, մեր հոգեւորականները, մեր հոգեւոր ղեկավարները պէտք է նկատի ունենան ամբողջ ժողովուրդը եւ ոչ թէ կղերականութիւնը անջատ տեսնեն ժողովուրդէն: Երկրորդ՝ մեր եկեղեցական կանոնագրութիւնը, օրէնքները, ընդհանրապէս բացարձակ իշխանութիւն կու տան կաթողիկոսին, պատրիարքին, առաջնորդին, եւ այլն: Այսօր, 21-րդ դարուն, միապետութիւնը կամ ամբողջ կառոյցի մը ներկան եւ ապագան մէկ հոգիի կողմէ որոշուիլը խնդրաշարժ է: Եկեղեցին, որպէս հինգէն եկած կառոյց, արդեօք համահո՞ւնչ է այսօրուան 21-րդ դարու մտածելակերպին եւ գործելակերպին: Խօսքս աստուածաբանութեան, դասանաբանութեան մասին չէ, այլ գուտ վարչական եւ կառավարելու խնդրին հետ կապուած է եւ այդ առումով ալ պէտք է կարեւոր քայլեր առնուին: